Vallex GROUP

ք. Երևան, 12.02.2019թ.
Ելք № ՎՄ-002

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ
պրն Տ. ԱՎԻՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն փոխվարչապետ,

Հայտնում ենք Ձեզ, որ «Վալլեքս» խմբի ընկերությունները Հայաստանում և Արցախում իրականացվող իրենց ներդրումային ծրագրերն ու տնտեսական (արտադրական) գործունեությունը համադրում են ազդակիր համայնքների ազգաբնակչության նկատմամբ կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հետ՝ ապահովելով համապատասխան ծրագրերի մշակումն ու կենսագործումը, իսկ այդ համայնքներում սոցիալական դրության վատթարացումը կանխելը համարում են կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրային թիրախներից մեկը: ՀՀ Կառավարության տարբեր մարմինների մեր երկխոսության նախորդ փորձը նկատի ունենալով՝ հարկ ենք համարում ընդգծել, որ մենք բարձր ենք գնահատում բիզնեսի հետ տարբեր հարցերի շուրջ արդյունավետ քննարկումներ ունենալու, միասին լուծումներ մշակելու Ձեր պատրաստակամությունը և վստահ ենք, որ համատեղ ջանքերով կկարողանանք լուծումներ գտնել ստորև նկարագրված խնդրին, որի շուրջ այսօր ձևավորվել է բավականին լարված իրավիճակ:

Ինչպես տեղյակ եք, 2018թ. հոկտեմբերից «Արմենիան Քափըր Փրոգրամ» («Էյ-Սի-Փի») ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) օբյեկտիվ պատճառներով կասեցրել է իր Ալավերդու պղնձաձուլական գործարանում խտանյութերի վերամշակումն ու անզուտ պղնձի ձուլումը, ինչպես նաև ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով նախաձեռնել է աշխատողների թվաքանակի և հաստիքների կրճատման գործընթաց՝ Ընկերության բոլոր աշխատողներին տալով աշխատանքից ազատման վերաբերյալ ծանուցումներ: Առաջին նման ծանուցումները տրվել էին համապատասխան կրճատումներն ու աշխատանքից ազատումները 2018թ. դեկտեմբերի վերջին կատարելու մասին: Այնուամենայնիվ, Ամանորի նախաշեմին ու ձմռան դժվարին ամիսներին Ալավերդու տարածաշրջանում սոցիալական իրադրության վատթարացում թույլ չտալու նկատառումներով Ընկերությունը, դեռևս 2018թ. դեկտեմբերի վերջին չեղարկել է նախկինում տրված ծանուցումները և Ընկերության բոլոր աշխատողներին տվել է նոր ծանուցումներ՝ նախատեսվող կրճատումները և աշխատանքից ազատումները 2019 թ. փետրվարի 28-ից կատարելու մասին:

Ակնհայտ է, որ Ընկերության կողմից արտադրանքի թողարկման կանգառի պայմաններում հնարավոր չէ անվերջ հետաձգել աշխատողների թվաքանակի և հաստիքների կրճատման գործընթացը՝ երկարացնելով (թարմացնելով) համապատասխան ծանուցումների ժամկետները: Անհրաժեշտ է արմատական մոտեցում խնդրի լուծմանը: Մեր հանդիպումների շրջանակներում բազմիցս շեշտվել է, որ Ընկերության արտադրական գործունեության վերսկսման հնարավորությունն էապես կախված է ռուսական ՎՏԲ բանկի պլաններից, քանի որ Ընկերությունն, իր ակտիվներով (ներառյալ Ընկերության բաժնետոմսերը) գրավադրված է ՎՏԲ բանկի օգտին՝ ի ապահովումն «Թեղուտ» ՓԲԸ վարկային պարտավորությունների: Վերջինի նկատմամբ վերահսկողությունը, ինչպես գիտեք, ներկայում ամ-

«Վալլեքս Գրուպ» ՓԲԸ
Հայաստանի Հանրապետություն
0010 Երեւան, Խանջյան փ.19
Հեռ.՝ 510888, ֆաքս՝ 510880
info@vallex.com

Vallex Group CJSC
19 Khanjyan Str., 0010 Yerevan
Republic of Armenia
Tel.: (+374 10) 510888, Fax: (+374 10) 510880
www.vallex.com

բողջությամբ անցել է ՎՏԲ բանկին: Ցավոք մինչ այժմ չկա որևէ հստակություն, թե ինչ է պատրաստվում անել ՎՏԲ բանկը. արդյո՞ք իրացնելու է իր գրավի իրավունքը՝ դառնալով Ընկերության բաժնետոմսերի սեփականատեր, եթե այո, ապա ե՞րբ է պատրաստվում դա անել: Դրանից է կախված թե ո՞վ և ինչպե՞ս է վերսկսելու Ընկերության գործունեությունը՝ Կառավարության հետ համաձայնեցված լուծումներ տալով նաև Ընկերության գործունեության բնապահպանական անվտանգության ապահովման առկախված կարճաժամկետ և երկարաժամկետ խնդիրներին:

Այլ կերպ ասած՝ Ընկերության հետագա գործունեության այս կամ այն տարբերակը քննարկելիս անհրաժեշտ է պարզել ՎՏԲ բանկի հնարավոր վարքագիծը Ընկերության ու նրա ակտիվների մասով՝ ապահովելով ՎՏԲ բանկի որոշումների և գործողությունների կանխատեսելիություն: Հայաստանի պետական այրերի հայտարարություններն այն մասին, որ ՀՀ Կառավարությունը «Թեղուտ» ՓԲԸ վարկի շուրջ ընդհանուր ընդունելի լուծումներ գտնելու ուղղությամբ քննարկումներ է ունենում ՎՏԲ բանկի հետ, մեզ հույս են տվել, որ մոտ ապագայում ՎՏԲ բանկի գործողություններում կլինի որոշակի հստակություն վերոնշյալ խնդրի լուծման՝ ներառյալ նաև Ընկերության մասով:

Խիստ մտահոգ լինելով Ընկերության 620 աշխատակիցներից յուրաքանչյուրի ճակատագրով, կարևորելով Ընկերության մասով ՎՏԲ բանկի որոշումների ու գործողությունների պարզաբանման անհրաժեշտությունը, Ընկերությունը մատադիր է, օգտագործելով իր ձեռքի տակ եղած գործիքակազմն ու հնարավորությունները, համապատասխան հարցում ուղղել ՎՏԲ բանկին՝ հույս ունենալով, որ կստանա հստակ պատասխան:

Այնուամենայնիվ, ՎՏԲ բանկից որևէ հստակ դիրքորոշում չներկայացնելու դեպքում (որն այսօր խիստ հավանական տարբերակ է համարվում), չնայած Ընկերության ղեկավարության կողմից գործադրվող բոլոր ջանքերին, Ալավերդի համայնքում սոցիալական իրադրության վատթարացմանը զուգահեռ անխուսափելիորեն մեծանալու են բացասական տրամադրությունները և լարվածությունը: Հետևապես, կարծում ենք, որ համայնքում սոցիալական ճգնաժամից խուսափելու համար անհրաժեշտ է հաշվի նստել վերոնշյալ իրականության հետ և դիտարկել նաև այլընտրանքային տարբերակներ:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ մեկ անգամ ևս մեր պատրաստակամությունն ենք հայտնում ՀՀ Կառավարության հետ ակտիվ համագործակցելու ու ծառացած խնդիրներին լուծումներ գտնելու հարցում: Լիահույս ենք, որ մեզ կհաջողվի երկարաժամկետ հեռանկարում ապահովել սոցիալական կայունությունը Ալավերդի քաղաքում և հարակից բնակավայրերում:

Հարգանքով՝

Վալերի Մեջլումյան
«Վալլեքս» խմբի նախագահ